

Մ. Ներսիսյան

ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ
ԵՎ ՇԱՐԺՎԱՆ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

Դավիթ բեկի գլխավորած հայկական ազատագրական շարժման մասին մեզ հասած աղբյուրների մեջ, որքան մեզ հայտնի է, չկան տեղեկություններ այն մասին, որ Մյունխենում 1722 թվից ծայր առած ժողովրդական ապստամբությունն ունեցել է որևէ արձագանք Վասպուրականում և ընդհանրապես Հայաստանի այն մասերում, որոնք 18-րդ դարի սկզբներում գտնվում էին Տաճկաստանի տիրապետության տակ: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Դավիթ բեկի շարժման պատմությանը նվիրված ուսումնասիրություններն այդ մասին բոլորովին լռություն են պահպանում: Մեր պատմության համար խոշոր նշանակություն ունեցող այդ հարցի մասին, սակայն, գոյություն ունի մի կողմնակի, բայց արժեքավոր աղբյուր, որի վրա և կցանկանայինք հրավիրել մեր բանասերների ու պատմաբանների ուշադրությունը:

1918 թվականին Երևանում լույս տեսնող «Աշխատանք» թերթը (տես № 77, 1918 թ. փետրվարի 10) հրատարակեց հին ավետարաններից մեկի հիշատակարանը, որից երևում է, որ Դավիթ բեկի շարժումն արձագանքներ է գտել Վասպուրականում և նրա հարևան գավառներում: Այդ հիշատակարանի հրատարակությունը ժամանակին աննկատելի է անցել, ուստի մենք ավելորդ չենք համարում այստեղ բերել այդ հիշատակարանն ամբողջությամբ: Ահա այն.

«Ի թուականութեան հայկազեան տումարիս ՌՃՀԱ (1722) յոյժ դառնակսկիժ և նեղ ժամանակիս, ես սուտանուն կրօնաւոր միարան արեղայս սուրբ մենաստանիս, որ ի վերայ ծովապատ կզգոյ, Լիմ Անասպատ կոչելոյ, աչաւք իսկ իմովք տեսի, թէ գարնանաբեր կենսանորոգ յեղանակիս, թէ որպիսի հաւաքումն կատարեցաւ ի վերայ սուրբ կզգոյս՝ խորհելոյ և մտածելոյ և ճար-ճարանք գտանելոյ վասն ազատութեան տառապեալ և ողորմելի ազգիս Հայոց: Առաջնորդք և վարդապետք և քահանայք և իշխանք ամրակառոյց քաղաքիս Վանայ, մեծամեծ գաւառաց Վասպուրականի, մեկիքք յերկրաց Քաջբերունեաց և Բզնունեաց, գիւղապետք համայն գիւղորէից հաւաքեալ եղեն ի ծովատես (?) սուրբ մենաստանս:

«Ես սուտանուն Մխիթար արեղայս՝ անարժանաբար ի միտս առի շրոյցք գաղտնի և ծածկախորհուրդ: Քաջհամբաւ և արիասիրտ վարդապետ մի՛ յերկրէն Ռշտունեաց տէր Ներսէս անուանեալ, յոյժ յուզեալ և լալագին

պատկերացոյց դառնակսկիծ վիճակս համօրէն ազգիս և յայտնեաց ցնծագին՝ թէ այր մի երկրէն Միւնեաց Դաւիթ բէկ անուանեալ, զօրաշարժութիւն արարեալ իցէ վասն հալածելոյ նեղիչք և կշտամբիչք մեր, միտս ունենալով ազատագրելոյ արիւնածուփ գաշխարհն Հայաստան¹: Արդ, ով բարեմիտ և հայրենապաշտ ժողովականք, շրջեսցէք գաւառս և ի կողմանս յերկրին ձերոյ խրախուսեցէք ժողովուրդք ձեր, որ մրափեալ է ի խոր խաւարի և տանջանաց, զի թօթափեսցեն զլուծ անիրաւաց բռնութեանցս, և յորժամ մեք առաքեսցուք զհրաւէր մարտի, բառնան ձայն ապստամբութեան ընդդէմ մարդակեր և խաչահալած թշնամեաց մերոց:

«Զկնի աւարտման զայս քաղցրալուր ճառասացութեանս՝ ժողովրդականք յոյժ վշտացեալ արտասուէին լռելեայն:

«Եւ եղեն զրուցանողք բազումք՝ կարծիք բազմազանս, առաջարկս անհամարս: Յետ այնորիկ՝ իշխանք և պարոնք և մելիքք և տանուտէրք յօժարեսցին վասն պատերազմի հաւաքելոյ զայրս (տղամարդիկ) բազումք քաջակորով և կռուարար, և հայթայթելոյ ուտեստս կռուապաշարոյ, սայլք և նժոյգս բազումս և պէտս բազմազանս, դամուրս (երկաթ) և նաւս և բուրդրս և ցորեանս և ոչխարս:

«Ամենայն [օր] երիցս գամ (անգամ) միարանք սր. Մենաստանիս մեծարեն պատգամաւորս աղ ու հացիւ և ընտիր ուտելիօք: Զկնի զայս հաւաքման, զոր կատարեցաւ՝ երիցս, եօթներորդ օր՝ նաւ մի եկեալ ի գեղջէ Սւանց կոչեցելոյ և գիշեր մի լուսնակազարդ՝ պատգամաւորք տեղաւորեսցին ի մէջ նաւին և ուղևորեսցին զծովապատ և զանառիկ կղզին յԱղթամար, առ ոտս վեհապատիւ Տէր Յովհաննէս կաթողիկոսի Հայոց Ձորեցոյ, յորում յայտնեալ իցեն զմեծախորհուրդ ձեռնարկս իւրեանց: Աստուածաւորտիր կաթողիկոսն զօտէր Յովհաննէս համաձայնաբար յօժարեալ իցէ շնորհեալ զկամս իւր, օրհնելով զպատգամաւորս, որք առաքինաբար զոհելոյ յանձն առեալ իցեն զկեանս իւրեանց, վասն ազատելոյ յաշխարհս Վասպուրական, ի լուծոյ բռնաւորաց և փաշաներաց և բեկերաց և աղաներաց:

«Տէր Աստուած կատարեսցէ զգործս ձեռաց իւրեանց, տածցէ յաջողութիւն նոցա գործելոյ և ազատելոյ ծովազարդն և զգեղատեսարան զաշխարհն մեր Վասպուրական, յորում յայսմ ժամանակի շէն և պայծառ մնացեալ են բազում վանս և մենաստանս և եկեղեցիս և մատուռս բազում գաւառս և անհամար գիւղօրայս:

«Արդ, որ հանդիպէք զայս յիշատակարանիս, զկնի ընթեռնելոյ՝ յիշեցէք սուտանուն կրօնաւօրս, Մխիթար արեղայս, որ գրեաց սա յուսոյ սրտի և լալոյ աչաւք, և ասացէք՝ Աստուած լուսաւորեսցէ զհոգին իւրոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաիտենից ամէն»:

Ինչպես երևում է հիշատակարանից, Դավիթ բեկի գլխավորած ազատագրութեան շարժումը մեծ ոգևորութիւն է առաջ բերել ոչ միայն Վասպուրականում, այլև Քաջբերունյաց, Բզնունյաց և Ռշտունյաց «երկրներում»: Կարևոր է նշել նաև այն հանգամանքը, որ Դավիթ բեկի օրինակով ազատագրական շարժում կազմակերպելու գաղափարն ընդգրկել է լայն զանգվածներ:

¹ Ընդգծված բառերը ձեռագրում կարմիր թանաքով են գրված:

Այն ավետարանը, ուր տեղավորված է եղել վերը բերված հիշատակարանը, 16-րդ դարի մի ձեռագիր է եղել, «որու մեջ երկու թուղթի ամբողջ երեսը ամբողջ սև թանաքով գրված էր վերոհիշյալ հիշատակարանը»:

Արդյոք չկան այս կարևոր հարցի մասին տեղեկություններ պարունակող այլ հիշատակարաններ: